ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 213-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9, 10, 11 և 15 կետերի պահանջներով և Սուրեն Սամվելի Սաղոյանի դիմումը, որոշում եմ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Սուրեն Սամվելի Սաղոյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել իրեն պատկանող Կոտայքի մարզ գ.Բալահովիտ 1-ին փողոց թիվ 56/9 հասցեում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողակտորում /հիմք <<Աշոտ Հակոբյան>> ԱՁ-ի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը /ինքնակամ կառուցված շինություններով/:

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և <<Աշոտ Հակոբյան>> ԱՁ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Սուրեն Սամվելի Սաղոյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի վկայական N 2808407/ Կոտայքի մարզ գ.Բալահովիտ 1-ին փողոց թիվ 56/9 արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողակտորում ինքնակամ կառուցել է արտադրական շինություններ:

Հաշվի առնելով, որ Սուրեն Սամվելի Սաղոյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ.Բալահովիտ 1-ին փողոց թիվ 56/9 արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողակտորում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

1. Սուրեն Սամվելի Սաղոյանին պատկանող Կոտայքի մարզ գ.Բալահովիտ 1-ին փողոց թիվ 56/9 հողակտորում ինքնակամ կառուցված շինությունները համարել օրինական:
2. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Բալահովիտի համայնքապետարանի բյուջեի N 900105206214 հաշվին պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված

ինքնակամ կառուցված շինություն 1-ին հարկի արտաքին մակերեսը 31,99ք.մ - 100768դրամ
ինքնակամ կառուցված շինություն 2-րդհարկիարտաքինմակերեսը 31,99ք.մ - 100768դրամ
ինքնակամ կառուցված բաց պատշգամբի արտաքին մակերեսը 3,71ք.մ - 11687դրամ

Ընդամենը 213223դրամ /երկու հարյուր տասներեք հազար երկու հարյուր քսաներեք դրամ, որպես ինքնակամ կառուցված շենք շինությունների օրինականացման վճար:

3. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցները ենթակա չէ պետական գրանցման, իսկ որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունը ապահովում է աշխատակազմի քարտուղար՝ Անդրանիկ Պետրոսյանը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019թ հուլիսի 12
գ.Բալահովիտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 214-Ա

2019ԹՎԱԿԱՆԻ ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՎԵՐԱԲԱԽՇՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի՝ որոշում եմ

1. Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքի փողոցային լուսավորության 5134 հոդվածի /բաժին 6 խումբ 4 դաս 1/ նախատեսված գումարից 200.0 /երկու հարյուր հազար / դրամ տեղափոխել ապարատի 5122 հոդված / բաժին 1 խումբ 1 դաս 1/
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019թ. Հուլիսի 12
գ.Բալահովիտ